

մանաւանդ իր կրօնական համոզումներուն համար (Ազգագրագրութիւն, էջ 2352-53):

Մասնաւորապէս զինքն գրգռած ըլլալ կը թուի իր աշակերտներէն Մովսէս Տաթևացիի նկատմամբ Մելքիսեդեկ կաթողիկոսի բռնած ընթացքը: Անիկա կը հալածէ Մովսէս Տաթևացին եւ կ'արգիլէ զայն քարոզելէ:

Մովսէս Տաթևացի որ միշտ յարգալից յարաբերութեան մը մէջ եղած է իր վարդապետին Գրիգոր Կեսարացիի հետ, և անշուշտ, այս պարագան ալ հաղորդած էր անոր, երբ արգիլուեցաւ քարոզելէ՝ իր գաւազանը և փիւռնը որ ստացած էր Գրիգոր Կեսարացիէն զրկեց կաթողիկոսին: Մելքիսեդեկ Գառնեցի ըմբռնեց սպառնալիքին սաստկութիւնը և վերագարծուց զանոնք:

Կեսարացին իր պաշտպանն էր, «խակ անոր առջեւ կը պսակառեին թե կարողիկոսն էր թե շուրջիկները» (Հ. Ներսէս Վրդ. Ակինեան, ՀԱ. 1933 էջ 391), վասնզի Կեսարացին «սեւ էր անւրցելի հեղինակութիւն կը վայելէր արեւմտեայց իմ» (Դոյն, էջ 172):

Գրիգոր Կեսարացի որ ապահովաբար լսած էր այն անցքերը որ հոն հեռուն կը պատահէին, պաշտպան կը կանգնի իր սանին՝ Մովսէս վարդապետին և բոլոր անոր պէս Հայ Եկեղեցւոյ հաւատարիմ եկեղե-